ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2018, 71, № 1, 84-87

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (INHIGEO) 42-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (INHIGEO-ի 50-ամյակը)

© 2018թ. Խ. Մելիքսեթյան, Մ. Միսակյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ. 24ա
e-mail: km@geology.am

2017թ.-ի սեպտեմբերի 13-18-ը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողովի (INHIGEO) 42-րդ գիտաժողովը՝ նվիրված INHIGEO-ի կազմակերպման 50-ամյա հոբելյանին:

Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողովը հանդիսանում է իր ոլորտում աշխարհում առաջին միջազգային գիտական կազմակերպությունը, որի նպատակն է խթանել երկրի մասին գիտությունների և մասնավորապես՝ երկրաբանության պատմության ոլորտում կատարվող շարունակական հետազոտությունների անցկացումը:

1964թ.-ի Միջազգային երկրաբանական կոնգրեսի շրջանակներում որոշվեց ստեղծել Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողով, և ի կատարումն այդ որոշման, 1967թ.-ին Երևանում՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայում, տեղի ունեցավ Հանձնաժողովի հիմնադիր ժողովը: Ժողովի շրջանակներում Հայաստանը հյուրընկալեց թվով 150 երկրաբանների աշխարհի 15 երկրներից, որի արդյունքում նոր գիտական հասարակության անդամներին հնարավորություն ընձեռնվեց միմյանց հետ ծանոթանալու և գիտական գաղափարներով կիսվելու: 1967թ.-ից ի վեր Հանձնաժողովի անդամների կողմից հրատարակվեցին գիտական մեծ արժեք ներկայացնող մեծաքանակ աշխատություններ և մենագրություններ:

1968թ.-ից սկսած INHIGEO-ն հանդիսանում է Երկրաբանական

գիտությունների միջազգային միության (IUGS) անդամ կազմակերպություն:

Ներկայումս հանձնաժողովն ունի 289 անդամ 57 երկրից: Հայաստանը ներկայացնում է 4 մասնակից՝ Խ. Մելիքսեթյան, Ա. Փիլիպոսյան, Գ. Մայխասյան և Գ. Խոմիզուրի:

Անցյալ տարի Երևանում կայացած INHIGEO 42-րդ գիտաժողովին մասնակցեց շուրջ 70 գիտնական 18 երկրից, ներառյալ՝ ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ավստրալիա, Ավստրիա, Բրազիլիա, Մեքսիկա, Նոր Զելանդիա, Նիգերիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռուսաստան, Սլովակիա և Հարավային Աֆրիկա, ինչպես նաև 30 մասնակից ՀՀ-ից:

Գիտաժողովի թեմատիկաներն էին.

1. INHIGEO-ի 50 տարիները
2. Երկրաբանական գաղափարների և մտքի զարգացումը
3. Երկրաբանության պատմությունը Հայաստանում
4. Քարերի և մետաղների մասին հնագույն գիտելիքները
5. Սեյսմիկ և հրաբխային գործունեության պատմական և նախապատմական վկայությունների ուսումնասիրությունները
6. Ընդհանուր աշխատություններ և հայտնի երկրաբանների կենսագրություններ:

Տարբեր երկրներում երկրաբանության պատմության հիմնախնդիրների, Հայաստանում երկրաբանական մտքի կայացման և զարգացման պատմության վերաբերյալ մասնակիցները ներկայացրեցին 60-ից ավելի գիտական զեկուցումներ:

Անտիկ ժամանակաշրջանի և միջնադարի հայ հեղինակների յուրահատուկ պատմական աշխատությունները, որոնք խնամքով պահպանվում են Մատենադարանում, թույլ են տալիս հետևել երկրաբանական մտքի ծագման և ձևավորման պատմությանը Հայաստանում և Հայկական բարձրավանդակում, ինչպես նաև՝ Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում: XII-XIV դարերի մի շարք տարեգիրների, պատմաբանների և եկեղեցական սպասավորների աշխատություններում պահպանվել են աղետալի երկրաշարժերի բազմաթիվ նկարագրություններ, որոնք տեղի են ունեցել միջնադարյան Հայաստանում, իսկ XV դարի հայկական ժամանակագրություններում կա Վանա լճի հյուսիսարևելյան մասում գտվող Նեմրութ հրաբխի ժայթքման արձանագրությունը և նկարագրությունը: Հայ տարեգիրների աշխատությունները չեն շրջանցել նաև հանքային ջրերի և դրանց բուժիչ հատկությունների մասին տվյալները, որոնցից շատերը հասել են մինչև մեր օրերը:

Այսպիսով, կարելի է ասել, որ միջնադարի հայ մտածողներն իրենց արժանի տեղն ունեն երկրաբանական գիտելիքների զարգացման պատմության մեջ:

Զեկույցներում բազմիցս հիշատակվեցին նաև հայկական ծագում ունեցող երկրաբանների՝ Վ. Ն. Լոդոչնիկովի, Ն. Ի. Քարաքաշի և Լ. Ա. Սպենդիարովի ծավալած երկրաբանական գործունեության և կենսագրության մասին տեղեկություններ:

Ղեկավարության խնդրանքով գիտաժողովը կազմակերպեց Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտը INHIGEO:

INHIGEO 42-րդ գիտաժողովի բացման արարողության ժամանակ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի ուղերձով հանդես եկավ ՀՀ փոխվարչապետ, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վայե Գաբրիելյանը:

Գիտաժողովը ներառում էր նաև երկրօրյա միջգիտաժողովյան ուղևորություն դեպի *Հայաստանի պատմության թանգարան, Մատենադարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարան*, Գառնի, Գեղարդ և Էջմիածին, ինչպես նաև հետգիտաժողովյան ուղևորություններ Հայաստանի տարբեր քաղաքներով, ներառյալ՝ Գյումրի, Սպիտակ, Վանաձոր, Դիլիջան, Ծաղկաձոր, Սևան, Նոր Գեղի, Ակնաշեն և Մեծամոր:

Գիտաժողովի աշխատանքներին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին ՀՀ ԳԱԱ ԵԳԻ աշխատակիցները, ներառյալ երիտասարդ գիտաշխատողները: Հարկ է նշել նաև գիտաժողովի և էքսկուրսիաների կազմակերպման գործում Ինստիտուտի համագործակցությունը Հայաստանի հնագետների՝ ՀՀ Մշակույթի նախարարության պատմական միջավայրի և պատմամշակութային թանգարան-արգելոցների պահպանության Ծառայության և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ:

INHIGEO 42-րդ գիտաժողովի շրջանակներում հրատարկվեց 3 գիրք՝ Ռ. Ջրբաշյան, Գ. Խոմիզուրի, Ա. Հարությունյան «Երկրաբանական մտքի ծագումը և զարգացումը Հայաստանում (Ք.ա. 5-րդ դ.-17-րդ դ.)», Վ. Մեյեր, Ռ. Մ. Քլերի, Լ. Ֆ. Ազուելա, Թ. Ս. Մոտա և Ս. Վոլկովիչ «Երկրագիտության պատմությունը. Նվիրված INHIGEO-ի 50-ամյա տարելիցին» Լոնդոնի երկրաբանական հասարակության հատուկ հրատարակություններ, Լոնդոն-2017 (W. Mayer, R.M. Clary, L.F. Azuela, T.S. Mota and S. Wolkowicz. “History of Geoscience: Celebrating 50 Years of INHIGEO”, Geological Society of London Special Publications Series, London, 2017), Լ. Ն. Լորդկիպանիձե «Նվիրված INHIGEO-ի 50-ամյակին՝ Երկրաբանական գիտությունների պատմության միջազգային հանձնաժողովին» Տաշքենդ, Հ. Մ. Աբդուլաևի անվ. երկրաբանության և երկրաֆիզիկայի ինստիտուտ, 2017 (Л. Н. Лордкипанидзе, К 50-летию ИНИГЕО (INHIGEO) - Международной комиссии по истории геологических наук): Վերահրատարակվեց Ա. Ավանեսյան, Է. Մալխասյան. Ս. Նազարեթյան «Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները» գիրքը:

Այս տարի նախատեսվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողների հետ համատեղ ևս մեկ հա-

տուկ ժողովածուի հրատարակում գերմանական Springer հրատարակության Historical Geography and Geosciences գրքերի շարքում, վերնագրված՝ «Հայաստանը հնագիտության և երկրի մասին գիտությունների պատմության խաչմերուկում» (“Armenia between Archaeology and History of Geosciences”, Special Edition), որում տեղ կգտնեն գիտաժողովի ընտրված զեկույցները:

Գիտաժողովը մեծ հետաքրքրություն առաջացրեց ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս, ինչի մասին փաստում են նաև մասնակիցների մեծ մասի բանավոր և գրավոր կերպով բազմիցս արտահայտած դրական կարծիքները: